© Գրիգոր Վահանյան, Վահան Վահանյան
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՔԱՐԵ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ, 1993 - ք. Երեւան – 2006

# ՀՆԱԴԱՐՅԱՆ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ ՎԱՐԴԵՆԻՍԻ ԼԵՌՆԵՐՈՒՄ, ՍԵՎՍԱՐ ԼԵՌԱՆ ԼԱՆՋԻՆ

(հայտնաբերվել է 1967 թ. ճարտարապետՍ. Պետրոսյանի կողմից, Հայաստան)

Աստղագիտական բովանդակությամբ՝ ժայռապատկերների հսկա համակարգ է հայտնաբերվել Գեղամա լեռներում (Հայաստան), օրինակ՝ Ցուլի և Օրիոնի /Հայկի/ համաստեղությունները: Հանդիպում են՝երկրագունդը մարդկանցով, Արեգակի, Լուսնի և մյուս երկնային լուսատուների պատկերները:

Սկիզբ առնելով Զոդի ոսկու հանքերից, հնագույն քարավանային ճանապարհը ձգվում է Սևանա լճի հարավային ափերից և Մարտունուց, այնուհետև, թեքվում է դեպի հարավ, Վարդենիսի լեռնաշղթայի արևմտյան լանջերով անցնում է Մարտունուց մինչև Սելիմյան լեռնանցքը: Այս ճանապարհի երկու կողմերում էլ հայտնաբերվել են հնադարյան աստղագիտական կենտրոններ: Այդ ճանապարհի հարևանությամբ գտնվող՝ առաջին և ամենանշանավոր օբյեկտը՝ աստղագիտական դիտարանների քարե քանդակների հրաշալի համալիրն է, տեղադրված Սևսար լեռան ժայռին: Այստեղ գերակշռողը հանդիսանում է քարե սալիկը՝ 3մ x 2մ չափերով, որի վրա մետաղյա հատիչով քերված են տարբեր նշաններ, երկնային լուսատուների և համաստեղությունների բազմաքանակ պատկերներ:

Ըստ Ս. Պետրոսյանի գյուտերի նախկին ԽՍՀՄ Կենտրոնական հեռուստատեսության պատվերով նկարահանվել է «Նկարներ ժայռին» գիտա-հանրամատչելի կինոնկարը (սցենարիստ Ա. Կակոսյան, ռեժիսոր Ժ. Ավետիսյան, օպերատոր Ս. Բալասանյան):

Լեռան գագաթին հայտնաբերվել է վեհասքանչ և հզոր եզական կիկլոպյան բերդ (Ք. Ա. 3-րդ հազարամյակի սկիզբ), որին հովիվները անվանում են Շեխի – Չինգիլ: Լեռան բարձրությունը՝ 3250 մետր է: Հեռավոր ժամանակներում լեռնաշղթայի մեծ մասը ծածկված է եղել խիտ անտառներով: Բերդից ոչ հեռու, Ս. Պետրոսյանի կողմից հայտնաբերվել է ժայռային նկարներ, որոնց վրա պատկերված են՝ որսորդության տեսարաններ, լուսնային օրացույց և այլն:

Բերդը կառուցվել է չմշակված, մեծաբեկոր քարերից առանց շաղախի: Պատերի հաստությունը հասնում է 2,5 – 3 մետրի: Բերդի շրջակայքում հայտնաբերվել է՝ Ցուլի /Բել/ և Օրիոնի /Հայկ/ համաստեղությունների եզական նկար, որը ոչ պակաս, քան՝ 4 հազար տարեկան է: Միանգամայն հնարավոր է, որ Հայկբերդը ամենաբարձր լեռնային ամրոցն է նախկին ԽՍՀՄ-ի տարածքում:

Նախորդ Հաջորդ

Բովանդակություն

Քաղաքակրթության քարե տարեգրությունը

© ArcaLer
Էլեկտրոնային տարբերակ - 2010